ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1916—1917 ԹԹ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1992, էջ 192։

Կազմողներ՝ Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ, Գ. Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Գ. Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Մ. Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

Արևելյան Հայաստանի նոր շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ամենատարբեր հարցերի վերաբերյալ ժամանակի ընթացքում կազմվել են բավականաչափ [illegible] գրական ժողովածուներ ու նյութեր, մի բան, որը չի կարելի ասել Արևմտյան Հայաստանի մասին։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց ի վեր, սկսած 1829 թ., ամենից առաջ ֆիսկալ (գանձարանային) նպատակներով, ռուսական իշխանությունները պարբերաբար անցկացրել են վիճակագրական ուսումնասիրություններ, բնակչության կամերալ (ծխային) ցուցակագրություններ և դրանք ի մի բերելով՝ ստեղծել խնամքով կազմված հաստափոր հատորներ։

Հայաստանի պետական գյուղացիների սոցիալ-տնտեսական կյանքի (կենցաղի) վերհանման համար հարուստ աղբյուրագիտական նյութ են տալիս 1880-ական թվականներին ուսումնասիրված և ըստ շրջանների լույս տեսած բազմահատոր նյութերը և դրանց համահավաք ժողովածուները։ Ավելի ուշ՝ Ռուսաստանի պատմության մեջ նշանակալի իրադարձություն եղավ 1897 թ. ընդհանուր մարդահամարը, որի նյութերը ևս պետական հովանավորությամբ ըստ նահանգների ու տարածաշրջանների մշակվել ու հրատարակվել են XX դ. սկզբին։

Եվ, վերջապես, նախախորհրդային ժամանակաշրջանում վերջին վիճակագրական ուսումնասիրությունն անցկացվեց 1916—1917 թթ.։ Ինչպես հայտնի է, 1916 թ. ամռանը Ռուսաստանի կենտրոնական վիճակագրական կոմիտեն (ԿՎԿ) ավելի քան 77 նահանգներում ու մարզերում, այդ թվում նրա բաղկացուցիչ մասը կազմող Արևելյան Հայաստանում, անցկացրեց գյուղատնտեսական համատարած հաշվեգրում (հաշվառում), որը թելադրված էր պատերազմի պայմաններում պետության տնտեսական կարիքները ստույգ հաշվարկելու ու հոգալու անհրաժեշտությամբ։ Իսկ 1917 թ. ամռանը ժամանակավոր կառավարության նախաձեռնությամբ անցկացվեց ըստ էության մարդահամար, որը կոչված էր օժանդակելու և դյուրացնելու կառավարության նախապատրաստած տնտեսական ու հողային բարեփոխումների գործը։

Եթե 1916 թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախնական արդյունքները 1916—1917 թթ. լույս տեսան երեք թողարկումներով (պրակներով), որոնցից երկրորդը նվիրված էր Կովկասին ու Արևելյան Հայաստանին, ապա 1917 թ. մարդահամարի Հայաստանին վերաբերող անկետային հարցման նյութերը քաղաքական և այլ անբարենպաստ հանգամանքների պատճառով, չմշակվեցին և չհրատարակվեցին։ Մինչդեռ 1917 թ. մարդահամարի նյութերը դիտական շատ մեծ արժեք ունեն, քանզի դրանք հնարավորություն են ընձեռում պարզելու հասարակության սոցիալական շերտավորման աստիճանը։

Եվ ահա, ավելի քան 70-ամյա ընդմիջումից հետո, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի աշխատակիցների մի փոքրաթիվ խումբ, պրոֆեսոր Ա. Ս. Համբարյանի գիտական ղեկավարությամբ, տարիների տքնանքով մշակեց և վիճակագրական ժողովածուի ձևով լույս ընծայեց ՀՀ ՊԿՊԱ № 125 ֆոնդում պահվող 1917 թ. մարդահամարի Արևելյան Հայաստանին վերաբերող նյութերը, ինչպես նաև թվով 16 վերամշակված ու պարզեցված աղյուսակներ՝ 1916 թ. գյուղատնտեսական հաշվեգրման Կովկասին վերաբերող աղբյուրագիտական թողարկումից։

Նա, ով գործ է ունեցել վիճակագրության հետ, դիտե, թե որքան ծանր ու մեղվաջան աշխատանք է պահանջում տասնյակ հարցերից բաղկացած մարդահամարի անկետային նյութերի գիտական մշակումը՝ խմբավորումը, համակարգումը, հաշվարկումը, արդյունքների ամփոփումը և այլն։ Ընդամենը, համալիր ձևով ուսումնասիրվել է 87617 տնտեսություն, 547350 բնակչությամբ, որը կազմել է Արևելյան Հայաստանի բնակչության ավելի քան 40 %-ը։ Այդ

նշանակում է, որ հիշյալ բաժնի չորս աշխատակիցների կողմից դիտատեխնիկական համակողմանի մշակման է ենթարկվել առնվազն 87617 քարտ՝ հարցերի լայն շրջանակով։ Սովորաբար նման աշխատանք կատարելու համար պետության նյութական հովանավորությամբ գործի են դրվում վիճակագրական հիմնարկություններ՝ մեծաթիվ աշխատակիցներով ու համակարգիչներով։ Եվ պատահական չէր, որ տարիներ առաջ, երբ այդ գործը ձեռնարկվեց, ոմանք տարակուսանքով վերաբերվեցին դրա հաջողությանը։ Սակայն ի պատիվ սույն ժողովածուի կազմողների, պետք է ասել, որ նրանք հաջողությամբ կատարել են իրենց առջև դրված դժվարին խնդիրը և դիտական շրջանառության մեջ դրել վիճակագրական-աղբյուրագիտական տվյալներով ու նյութերով հարուստ մի աշխատություն, առանց որի անհնար է լիարժեք ներկայացնել XX դ. սկզբների Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությունը։

Գրախոսվող ժողովածուի ամենահիմնական նշանակությունն այն է, որ փ մի են բերված 1916 թ. գյուղատնտեսական հաշվեգրման ու, հատկապես, 1917 թ. մարդահամարի արդյունքները։ Ուսումնասիրության մեջ խոսուն թվերի լեզվով մեր առջև հառնում է նախախորհրդային Արևելյան Հայաստանը, հատկապես, արևելահայ գյուղն ու գյուղացիությունը՝ իրենց տընտեսություններով, աղգային կազմով, հողատարածությամբ, անասունների գլխաքանակով, աշխատանքի գործիքներով, դրաղմունքով, դրագիտությամբ և այլն։ Կատարված հաշվումներն ու տվյալները մասամբ պարզում են նաև երկրամասի քաղաքային բնակչության ներքին կյանքի տարբեր հարցեր։ Այնտեղ կան տվյալներ, ինչպես առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների, արհեստա-արտադրական օբյեկտների, նույնպես և քաղաքային սդգարնակչության զբաղմունքների մասին (էջ 70—75)։

Կառուցվածքային տեսակետից աշխատությունը բաղկացած է ներածությունից, 1916 թ. գյուղատնտեսական հաշվեգրմանը վերաբերող 16 և 1917 թ. մարդահամարին վերաբերող 112 աղյուսակներից։ Ընդարձակ ու բովանդակալից ներածության մեջ Ա. Ս. Համբարյանը ներկայացնում է հարցի հակիրճ պատմությունը, տալիս է 1916—1917 թթ. մարդահամարների նյութերի և դրանց հիման վրա կազմված աղյուսակների վերլուծականներ, անում հետաքրքրիր ընդհանրացումներ և այլ դիտարկումներ։

Քննվող ժողովածուի գիտական ամենամեծ արժեքը, մեր կարծիքով, թերևս, այն է, որ 1917 թ. մարդահամարի տվյալների մշակման հիման վրա ամբողջական ու համալիր կերպով ներկայացված է բնակչության սոցիալական շերտավորման լիարժեք պատկերը։ Ա. Ս. Համբարյանն ընդհանրացնելով ու ամփոփելով մարդահամարի նյութերը, վիճակագրական ամբողջական ու համոզիչ նյութերի հիման վրա, հայ պատմագիտության մեջ, թերևս, առաջինը հիմնավորապես ցույց է տալիս Հոկտեմբերյան հեղաշրջման նախօրյակին արևելահայ գյուղի սոցիալական շերտավորման ամբողջական պատկերը. հարուստներ՝ 2,4 %, միջակներ՝ [illegible] % և չքավորներ՝ 64,3 %։ Ընդհանրացնող աղյուսակներում տրված են գյուղացիության սոցիալական շերտավորումը ըստ հողատիրության (էջ 45), ըստ ազգության (էջ 47—48), ըստ բանող անասունների գլխաքանակի (էջ 52—54) և այլն։ 1917 թ. մարդահամարի նյութերը արժեքավոր տեղեկություններ են տալիս ապրանքաշուկայական տնտեսության գլխավոր հատկանիշի, վարձու աշխատանքի կիրառման մասին։ Մասնավորապես, № 22 աղյուսակի համահավաք տվյալները ցույց են տալիս, որ ունեզուրկ և կիսաունեզուրկ զանգվածները կազմել են 277020 մարդ (էջ 62)։

Գյուղացիության սոցիալական շերտավորումը շուկայական անտեսության պայմաններում միանգամայն օրինաչափ ու անխուսափելի երևույթ է։ Ուշադրավն այն է, որ այժմ արդեն՝ 1880-ական, 1897 և 1917 թթ. վիճակագրական նյութերի համեմատական ուսումնասիրության հիման վրա կարելի է հիմնական գծերով վեր հանել արևելահայ գյուղի սոցիալական շերտավորման գործընթացների դինամիկան ու, առհասարակ, ամբողջական պատկերացում կազմել XIX դ. վերջերի և XX դ. սկզբների Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմանների մասին։ Սակայն դրա հետ մեկտեղ, կարծում ենք, որ 1917 թ. մարդահամարի հիման վրա ընդհանրացումներ ու հետևություններ անելիս անպայման պետք է հաշվի առնել, որ 1917 թ. Ռուսաստանն ու Հայաստանը գտնվում էին համաշխարհային պատերազմի և բաղաքական վերջի վերումների պայմաններում, որոնք, ինչ խոսք, բացասաբար էին անդրադառնում դյուղի ու գյուղացիության կյանքն արտացոլող թվային-տոկոսային ցուցանիշների վրա։

Քննվող ժողովածուի արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակները չեն սահմանափակվել միայն Երևանի նահանգի և Կարսի մարզի նյութերի շրջանակներում, այլ հնարավորության սահմաններում ընդգրկել են Արևելյան Հայաստանի նաև մյուս շրջանները՝ Զանգեզուրի, Ղա-

դախի, Շուշիի գավառները և Լոռու գավառամասը։ Բաց է մնացել միայն Ախալքալաքի գավառը՝ պատմական Ջավախքը։ Մարդահամարների նյութերի խմբավորումն ըստ գավառների մասնագետ հետազոտողին հնարավորություն է տալիս ավելի խորությամբ ուսումնասիրելու և վեր հանելու Հայաստանի տարբեր տարածաշրջանների զարգացման առանձնահատկությունները։ Մարդահամարների հարցարերթիկները մշակելիս հանդես են բերվել տարբերակված մոտեցում. յուրաքանչյուր գավառի գյուղացիական տնտեսությունները խմբավորել են անկետային հարցումներում գրառված գրեթե բոլոր հիմնական ցուցանիշները՝ տնտեսությունները, բնակչության ազգային-սեռային կազմը, վարելահողը, անասնաքանակը, բանուժը, վարձու աշխատանքը, հողի վարձակալությունը և այլն։ Ցավոք, չկա գյուղատնտեսական ինվենտարը (գործիքները։ Որքան էլ տվյալները թերի են, ցանկալի կլիներ, եթե ուսումնասիրվեին նաև գյուղատնտեսական գործիքները՝ արոր, գութան, հնձիչ, կալսիչ և այլն, որոնց խմբավորումով ու դասակարգումով կարելի էր պատկերացում կազմել տնտեսությունների տեխնիկական զինվածության մակարդակի վերաբերյալ։ Ցանկալի ու շահեկան կլիներ նաև կատարել տնտեսությունների ունեցած վարելահողերի և կոնկրետ կատարված ցանքերի, որոնց միջև պատերազմի և երկրի քաղաքական անկայունության պայմաններում առաջացել էր մեծ խզում, համեմատություն։ Ակնհայտ է, որ գյուղացիության բարեկեցության աստիճանը որոշելիս շատ կարևոր է պարզել կատարած ցանքը, որը միաժամանակ արտահայտում է նրա արտադրության միջոցներով ապահովվածության աստիճանը, ընդհանրապես տնտեսական հնարավորությունը և այլն։

Վերջում, զուտ որպես ցանկություն կարծում ենք, որ որոշ աղյուսակներ պետք է ավելի հանգամանորեն ծանոթագրվեին ու մեկնաբանվեին։ Այսպես,օրինակ, № 23 աղյուսակից (էջ 63) ստացվում է, որ 157 գյուղերի շնչերի թիվը կազմել է ընդամենը 302 մարդ։ Կամ, օրինակ, № 39 աղյուսակում (էջ 77)՝ այնտեղ, որտեղ ըստ ազգությունների բանակ զորակոչվածների ցանկում թաթարների և քրդերի սյունակները դատարկ են՝ ծանոթագրել, որ մահմեդականները ռուսական բանակ չէին զորակոչվում և այլն։

Այսպիսով, 1916—1917 թթ. մարդահամարների բազմահարուստ նյութերի գիտական մշակման շնորհիվ ստեղծվել է հիմնարար, սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող վիճակագրական մի աշխատություն, որը թվերի լեզվով շատ առատ նյութ է տալիս XX դ. սկզբների Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի շատ կողմերի վերաբերյալ։

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու